Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-821-16.04.2024-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածում.

1) 1-ին մասում՝

ա. 1-ին կետը լրացնել նոր «գ» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«

գ. ձեռնարկատիրական գործունեության հետ կապված կամ կորպորատիվ իրավահարաբերություններից բխող հատուցելի պայմանագրի կամ դրա վավերության կամ գնի վրա ազդող առանձին մասի վավերությունը վիճարկելու վերաբերյալ պահանջով	պայմանագրի գնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 6-ապատիկից, և ոչ ավելի բազային տուրքի 25 000-ապատիկից

».

բ. 8-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.

գ. 10-րդ կետը լրացնել նոր «բ1» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«

բ1. ձեռնարկատիրական գործունեության հետ կապված կամ կորպորատիվ իրավահարաբերություններից բխող հատուցելի պայմանագրի, կամ դրա վավերության կամ գնի վրա ազդող առանձին մասի վավերությունը վիճարկելու վերաբերյալ պահանջի գործերով	առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում վճարման ենթակա պետական տուրքի չափին գումարած բազային տուրքի 30-ապատիկի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի 15 000-ապատիկից

».

դ. 11-րդ կետը լրացնել նոր «բ1» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«

բ1. ձեռնարկատիրական գործունեության հետ կապված կամ կորպորատիվ իրավահարաբերություններից բխող հատուցելի պայմանագրի կամ դրա վավերության կամ գնի վրա ազդող առանձին մասի վավերությունը վիճարկելու վերաբերյալ պահանջի գործերով	առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում վճարման ենթակա պետական տուրքի չափին գումարած բազային տուրքի 40-ապատիկի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի 10 000-ապատիկից

».

2) լրացնել նոր 1.2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետում պայմանագրի գինը որոշվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 440-րդ հոդվածով նախատեսված կանոններով: Գույքը վարձակալության հանձնելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու պայմանագրերի դեպքում, երբ դրանցով նախատեսված է պարբերական

վճարումների կատարում, սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետով նախատեսված պայմանագրի գինը որոշվում է նման պարբերական վճարումների հանրագումարով, բայց ոչ ավելի քան մեկ տարվա համար նախատեսված վճարումների հանրագումարը:».

3) 2-րդ մասի 2-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«

2) այն վարչական ակտերի վիճարկման պահանջով հայցադիմումների համար, որոնցով առաջադրվել է կամ որոնց հիման վրա ծագել է դրամական պարտավորություն հետևյալ չափերով՝	

»:

Հոդված 2. Օրենքի 38-րդ հոդվածում.

1) 1-ին մասի՝

1. «բ» կետում՝

ա. «դատարանների կողմից» բառերից հետո լրացնել «հայցադիմումները, » բառը.

բ. «3-րդ մասով» բառերը փոխարինել «3-րդ և 5-րդ մասերով» բառերով.

գ. «դեպքի» բառը փոխարինել «դեպքերի» բառով.

2. «բ1» կետում «վերաքննիչ» բառից հետո լրացնել «կամ վճռաբեկ» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ մաս.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերով հայցադիմումի ընդունումը մերժվելու դեպքում վճարված պետական տուրքը չի վերադարձվում:»:

Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

2. Սույն օրենքը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված հայցադիմումների և դրանց հիման վրա հարուցված գործերի վրա:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դատարան ներկայացված հայցադիմումների քննության արդյունքով կայացված դատական ակտերի, ինչպես նաև՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին կամ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումների բողոքարկման դեպքում կիրառվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող նորմերը:

4. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դատարան ներկայացված հայցադիմումները կամ բողոքները վերադարձնելուց հետո դրանք սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կրկին ներկայացվելու դեպքում դրանց նկատմամբ կիրառվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող նորմերը:

5. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված հայցադիմումներում կամ բողոքներում նշված պահանջը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո փոփոխելու դեպքում պետական տուրքի գումարի չբավականացնող մասը գանձելիս կիրառման են ենթակա մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող նորմերը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածում.

4) 1-ին մասում՝

ա. 1-ին կետը լրացնել նոր «գ» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«

գ. ձեռնարկատիրական գործունեության հետ կապված կամ կորպորատիվ իրավահարաբերություններից բխող հատուցելի պայմանագրի կամ դրա վավերության կամ գնի վրա ազդող առանձին մասի վավերությունը վիճարկելու վերաբերյալ պահանջով	պայմանագրի գնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 6-ապատիկից, և ոչ ավելի բազային տուրքի 25 000-ապատիկից

».

բ. 8-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.

գ. 10-րդ կետը լրացնել նոր «բ1» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«

բ1. ձեռնարկատիրական	առաջին ատյանի ընդհանուր

գործունեության հետ կապված կամ կորպորատիվ իրավահարաբերություններից բխող հատուցելի պայմանագրի, կամ դրա վավերության կամ գնի վրա ազդող առանձին մասի վավերությունը վիճարկելու վերաբերյալ պահանջի գործերով	իրավասության դատարանում վճարման ենթակա պետական տուրքի չափին գումարած բազային տուրքի 30-ապատիկի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի 15 000-ապատիկից

».

դ. 11-րդ կետը լրացնել նոր «բ1» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«

բ1. ձեռնարկատիրական գործունեության հետ կապված կամ կորպորատիվ իրավահարաբերություններից բխող հատուցելի պայմանագրի կամ դրա վավերության կամ գնի վրա ազդող առանձին մասի վավերությունը վիճարկելու վերաբերյալ պահանջի գործերով	առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում վճարման ենթակա պետական տուրքի չափին գումարած բազային տուրքի 40-ապատիկի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի 10 000-ապատիկից

».

5) լրացնել նոր 1.2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետում պայմանագրի գինը որոշվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 440-րդ հոդվածով նախատեսված կանոններով: Գույքը վարձակալության հանձնելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու պայմանագրերի դեպքում, երբ դրանցով նախատեսված է պարբերական վճարումների կատարում, սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետով

նախատեսված պայմանագրի գինը որոշվում է նման պարբերական վճարումների հանրագումարով, բայց ոչ ավելի քան մեկ տարվա համար նախատեսված վճարումների հանրագումարը:».

6) 2-րդ մասի 2-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«

2) այն վարչական ակտերի վիճարկման պահանջով հայցադիմումների համար, որոնցով առաջադրվել է կամ որոնց հիման վրա ծագել է դրամական պարտավորություն հետևյալ չափերով՝	

»:

Հոդված 2. Օրենքի 38-րդ հոդվածում.

2) 1-ին մասի՝

3. «բ» կետում՝

ա. «դատարանների կողմից» բառերից հետո լրացնել «հայցադիմումները, » բառը.

բ. «3-րդ մասով» բառերը փոխարինել «3-րդ և 5-րդ մասերով» բառերով.

գ. «դեպքի» բառը փոխարինել «դեպքերի» բառով.

4. «բ1» կետում «վերաքննիչ» բառից հետո լրացնել «կամ վճռաբեկ» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ մաս.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերով հայցադիմումի ընդունումը մերժվելու դեպքում վճարված պետական տուրքը չի վերադարձվում:»:

Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

2. Սույն օրենքը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված հայցադիմումների և դրանց հիման վրա հարուցված գործերի վրա:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դատարան ներկայացված հայցադիմումների քննության արդյունքով կայացված դատական ակտերի, ինչպես նաև՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին կամ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումների բողոքարկման դեպքում կիրառվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող նորմերը:

4. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դատարան ներկայացված հայցադիմումները կամ բողոքները վերադարձնելուց հետո դրանք սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կրկին ներկայացվելու դեպքում դրանց նկատմամբ կիրառվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող նորմերը:

5. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված հայցադիմումներում կամ բողոքներում նշված պահանջը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո փոփոխելու դեպքում պետական տուրքի գումարի չբավականացնող մասը գանձելիս կիրառման են ենթակա մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող նորմերը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-821-16.04.2024-ՊԻ-011/1 ԵՎ Կ-8211-16.04.2024-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ Կառավարություն***	**««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	Հոդվածի 1-ին մասի 1-ին կետում լրացնել «գ» ենթակետ հետևյալ բովանդակությամբ. «գ. «դեպքի» բառը փոխարինել «դեպքերի» բառով.»: Առաջարկը պայմանավորված է կատարվող այլ փոփոխությամբ, այն է՝ Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսվում է Օրենքի 38-րդ հոդվածի «3-րդ մասով» բառերը փոխարինել «3-րդ եւ 5-րդ մասերով» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

2.	***ՀՀ Կառավարություն***	**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Հոդվածում՝ 1. Առաջին նախադասությունից հանել «ՀՕ-110-Ն» բառը: 2. «քաղաքացիական» բառից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը: Առաջարկը պայմանավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված կարգավորմամբ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	***ՀՀ Կառավարություն***	**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	Հոդվածով լրացվող 7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «7) հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը:»: Առաջարկը պայմանավորված է տերմինների և սահմանումների միատեսակ կիրառությունն ապահովելու «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջով և արդեն ձևավորված դատական պրակտիկայի պահպանման նպատակահարմարությամբ: Մասնավորապես, համանման իրավիճակում Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			համաձայն՝ Վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը: Իր հերթին, Վճռաբեկ դատարանը իր 26.12.2014թ.-ի թիվ ՎԴ/3477/05/13 վարչական գործով որոշմամբ անդրադարձել է նշված կանոնի մեկնաբանմանը:		